ԱՐԲԻՏՐԱԺԻ ԵՎ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿ

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1. Արբիտրաժային գործի քննության ընթացակարգի արձանագրության սույն օրինակը (**Օրինակ** կամ **Ընթացակարգի արձանագրություն**) նախագծվել է միայն AMCA արբիտրաժային վարույթներով արբիտրների համար՝ AMCA Արբիտրաժային կանոնների 26-րդ հոդվածին համապատասխան: Փաստաթուղթը նախատեսված է որպես ուղեցույց արբիտրաժային վարույթի անցկացման համար:
2. Արբիտրներին խորհուրդ է տրվում սույն Օրինակը համապատասխանեցնել յուրաքանչյուր գործի հանգամանքներին:
3. Եթե կողմը հրաժարվում է ստորագրել Ընթացակարգի արձանագրությունը, ապա սույն արձանագրության կողմերի միջև համաձայնեցված դրույթները պետք է կամ փոփոխվեն կամ հեռացվեն արձանագրությունից: Արձանագրությունը պետք է ներառի միայն այն, ինչի շուրջ բոլոր կողմերը համաձայն են:
4. Եթե կողմը չի ստորագրում Ընթացակարգի արձանագրությունը, այն համարվում է ուժի մեջ մտած մյուս կողմի և միանձնյա արբիտրի կամ արբիտրաժային տրիբունալի բոլոր անդամների ստորագրությամբ:
5. Քառակուսի փակագծերում առանձնացված են Օրինակի ոչ պարտադիր նախադասությունները, իսկ թեք գծերով առանձնացված են այլընտրանքային տարբերակները:
6. Արբիտրներին խորհուրդ է տրվում հարցերի դեպքում կապ հաստատել AMCA գործերի կառավարման թիմի հետ:

© **Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն** (AMCA)
Բոլոր իրավունքները պաշտպանված են

ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի նոյեմբերի 27-ին ընդունված AMCA արբիտրաժային կանոնների 26-րդ հոդվածին համապատասխան՝

AMCA ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ԳՈՐԾ

ARB/0000/ԱՄԻՍ/ՏԱՐԻ

ՀԱՅՑՎՈՐ/ՀԱՅՑՎՈՐՆԵՐ ԸՆԴԴԵՄ **ՊԱՏԱՍԽԱՆՈՂ/ՊԱՏԱՍԽԱՆՈՂՆԵՐ** ԸՆԴԴԵՄ **ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՈՂՄ/ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՈՂՄԵՐ /ՊԱՀԱՆՋԻ ՄԱՍԻՆ**

ԿՈՂՄԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

ՀԱՅՑՎՈՐ/ՀԱՅՑՎՈՐՆԵՐ

ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ
Հասցե՝
Հեռախոս՝
Էլ. փոստի հասցե՝

[ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ]

ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ
Հասցե՝
Հեռախոս՝
Էլ. փոստի հասցե՝

ՊԱՏԱՍԽԱՆՈՂ/ ՊԱՏԱՍԽԱՆՈՂՆԵՐ

ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ
Հասցե՝
Հեռախոս՝
Էլ. փոստի հասցե՝

[ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ]

ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ
Հասցե՝
Հեռախոս՝
Էլ. փոստի հասցե՝

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՈՂՄ/
ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՈՂՄԵՐ

ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ
Հասցե՝
Հեռախոս՝
Էլ. փոստի հասցե՝

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ
Հասցե՝
Հեռախոս՝
Էլ. փոստի հասցե՝

ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՏՐԻԲՈՒՆԱԼ

ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ	ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ	ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ
Համա-արբիտր	***Նախագահող/միանձնյա արբիտր***	***Համա-արբիտր***
Հասցե՝ Հեռախոս՝ Էլ. փոստի հասցե՝	Հասցե՝ Հեռախոս՝ Էլ. փոստի հասցե՝	Հասցե՝ Հեռախոս՝ Էլ. փոստի հասցե՝

AMCA ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԹԻՄ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամ

0026, Երևան, Արշակունյաց 51, տարածք 47

ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԹԻՄ

[Ներառել բովանդակությունը]

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

I – ԿԻՐԱՌՎՈՂ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ

1. Ընթացակարգի արձանագրության մեջ կիրառվում են հետևյալ տերմինները.

- «Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամ («**AMCA**»)
- **AMCA** Քարտուղարություն («**Քարտուղարություն**»)
- **AMCA** Արբիտրաժային խորհուրդ («**Խորհուրդ**»)
- **AMCA** Արբիտրաժային խորհրդի ազգային հանձնաժողով («**Ազգային հանձնաժողով**»)
- 2023 թվականի նոյեմբերի 27-ին ուժի մեջ մտած AMCA արբիտրաժային կանոններ («**Կանոններ**»)
- Արբիտրաժային տրիբունալ, որը ներառում է մեկ կամ երեք արբիտրներ («**Տրիբունալ**»)
- Հայցվոր/հայցվորներ, պատասխանող/պատասխանողներ/ և այլ լրացուցիչ կողմ/կողմեր միասին («**Կողմեր**»)
- *[Ցանկացած այլ հասկացություն, որը կարող է անհրաժեշտ լինել]*

II – ԿՈՂՄԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

2. Ընթացակարգի արձանագրությունն ուժի մեջ մտնելուց հետո կողմի հասցեի կամ ներկայացուցչի փոփոխության մասին պետք է անմիջապես գրավոր տեղեկացվեն մյուս Կողմերը, Տրիբունալը և Քարտուղարությունը:
3. Կողմերը համաձայնում են, որ այն դեպքում, երբ կողմի նոր ներկայացուցիչը փոխկապակցված է արբիտրի հետ, ինչը, ըստ արբիտրաժային տրիբունալի, կարող է հանգեցնել շահերի բախման, Տրիբունալը կարող է ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ արբիտրաժի օբյեկտիվությունն ապահովելու

համար, ներառյալ՝ բացառել կողմի նոր ներկայացուցչի մասնակցությունն արբիտրաժային վարույթին կամ դրա մի մասին:

4. Ստորագրելով սույն Ընթացակարգի արձանագրությունը՝ Կողմերը հաստատում են, որ իրենց ներկայացուցիչները լիազորված են իրենց անունից և ի շահ իրենց գործելու արբիտրաժային գործի ընթացքում՝ սույն Ընթացակարգի արձանագրության կատարումն ապահովելու համար: Յուրաքանչյուր ներկայացուցիչ կարող է իր իրավունքներն ու լիազորություններն իրացնել ինչպես անհատապես, այնպես էլ կողմի/կողմերի հետ համատեղ:

III – ՏՐԻԲՈՒՆԱԼԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

5. Տրիբունալը ձևավորվել է հետևյալ կերպ՝

Խորհրդի [տարի, ամիս օր]-ի որոշմամբ [անուն, ազգանունը] հաստատվել է որպես միանձնյա արբիտր]՝ համաձայն Կանոնների 14-րդ հոդվածի 1-ին մասի]: Խորհրդի [տարի, ամիս օր]-ի որոշմամբ [անուն, ազգանունը] նշանակվել է որպես միանձնյա արբիտր]՝ համաձայն Կանոնների 14-րդ հոդվածի 3-րդ մասի]:

/[Հայցվորի/հայցվորների [և Լրացուցիչ կողմի/Լրացուցիչ կողմերի] առաջադրմամբ և Խորհրդի [տարի, ամիս օր]-ի որոշմամբ [անուն, ազգանունը] հաստատվել է որպես համա-արբիտր՝ համաձայն Կանոնների 14-րդ հոդվածի 4-րդ մասի]:

/[Հայցվորի/հայցվորների [և Լրացուցիչ կողմ/Լրացուցիչ կողմեր] անունից և Խորհրդի [տարի, ամիս օր]-ի որոշմամբ [անուն, ազգանունը] նշանակվել է որպես համա-արբիտր]՝ համաձայն Կանոնների 14-րդ հոդվածի 4-րդ մասի]:

/[Պատասխանողի/պատասխանողների [և Լրացուցիչ կողմի/Լրացուցիչ կողմերի] առաջադրմամբ և Խորհրդի [տարի, ամիս օր]-ի որոշմամբ [անուն, ազգանունը] հաստատվել է որպես համա-արբիտր՝ համաձայն Կանոնների 14-

որդ հոդվածի 4-րդ մասի] :

/[Պատասխանողի/պատասխանողների [և Լրացուցիչ կողմ/Լրացուցիչ կողմեր] անունից և Խորհրդի [տարի, ամիս օր]-ի որոշմամբ [անուն, ազգանունը] նշանակվել է որպես համա-արբիտր]՝ համաձայն Կանոնների 14-րդ հոդվածի 4-րդ մասի]:

/[համա-արբիտրների համատեղ առաջադրմամբ և Խորհրդի [տարի, ամիս օր]-ի որոշմամբ [անուն, ազգանունը] հաստատվել է որպես արբիտրաժային տրիբունալի նախագահող՝ համաձայն Կանոնների 14-րդ հոդվածի 5-րդ մասի]:
/[Խորհրդի [տարի, ամիս օր]-ի որոշմամբ [անուն, ազգանունը] նշանակվել է որպես արբիտրաժային տրիբունալի նախագահող՝ համաձայն Կանոնների 14-րդ հոդվածի 5-րդ մասի]:

6. Ստորագրելով Ընթացակարգի արձանագրությունը՝ յուրաքանչյուր կողմ հաստատում է Տրիբունալի պատշաճ ձևավորումը:
7. Համապատասխանաբար, Կողմերը հրաժարվում են առարկություններ ներկայացնել այն հարցերի վերաբերյալ, որոնք իրենց հայտնի են դարձել ստորագրման պահին:

IV – ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

8. Կանոնների 4-րդ հոդվածին համապատասխան՝ ցանկացած կողմի բոլոր միջնորդությունները և գրավոր այլ հաղորդակցությունները, ինչպես նաև դրանց կցված բոլոր փաստաթղթերը սույն արձանագրությամբ նշված հասցեներով պետք է ուղարկվեն յուրաքանչյուր կողմին, յուրաքանչյուր արբիտրին և Քարտուղարությանը:
9. Ծանուցումները և այլ հաղորդակցությունները պետք է կատարվեն կողմի կամ նրա ներկայացուցչի վերջին այն հասցեով, որը ներկայացրել է տվյալ կողմը կամ այլ կողմ: Նման ծանուցումը կամ հաղորդակցությունը կարող է

իրականացվել առաքման միջոցով՝ պատվիրված նամակի, սուրհանդակի, կամ էլ.փոստի կամ հեռահաղորդակցության ցանկացած այլ միջոցով՝ Տրիբունալի կողմից սահմանված ժամկետում:

10. Քարտուղարությանը հասցեագրված բոլոր փաստաթղթերն ուղարկվում են միայն էլեկտրոնային եղանակով:
11. [*Այստեղ պետք է նշվեն ծանուցմանը և/կամ արբիտրաժային վճռի կայացմանը վերաբերող հատուկ պահանջները՝ սահմանված արբիտրաժի վայրի օրենքով*]:
12. Կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չլինելու դեպքում ստորագրված Ընթացակարգային Արձանագրությունը ուղարկվում է նաև Քարտուղարությանը:

V – ԳՈՐԾԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՈՒՆԸ

13. Քարտուղարությունը [տարի, ամիս, օր]-ին Հայցվորից ստացել է Արբիտրաժ իրականացնելու պահանջ, որով վերջինս պահանջել է. . . . . .
14. Հայցվորները [նշել է, որ համաձայն արբիտրաժային համաձայնության՝ արբիտրաժային գործը քննում է միանձնյա արբիտրը / եռակազմ Տրիբունալը [և ____-ին առաջադրել է որպես համա-արբիտր] / [առաջարկել է, որ գործը քննի միանձնյա արբիտրը / եռակազմ Տրիբունալը [և ____ ին առաջադրել է որպես համա-արբիտր:]

15. Քարտուղարությունը [տարի, ամիս, օր]-ին Արբիտրաժ իրականացնելու պահանջի և պատասխան ներկայացնելու հնարավորության մասին ծանուցել է Պատասխանողին/Պատասխանողներին:
16. [տարի, ամիս, օր]-ին [Քարտուղարության կողմից տրված լրացուցիչ ժամկետի ավարտից հետո], [Քարտուղարությունը ստացել է Պատասխանող/ների կողմից ներկայացված Արբիտրաժ իրականացնելու պահանջի պատասխանը / [և հակընդդեմ պահանջները:] /[Քարտուղարությունը ստացել է նաև

Լրացուցիչ կողմ ներգրավելու մասին միջնորդություն:]

17. Պատասխանում Պատասխանող(ներ)ը նշել է, որ [համաձայն արբիտրաժային համաձայնության՝ արբիտրաժային գործը քննում է միանձնյա արբիտրը / եռակազմ Տրիբունալը [և ____-ին առաջադրել է որպես համա-արբիտր] / [առաջարկել է, որ գործը քննի միանձնյա արբիտրը / եռակազմ Տրիբունալը [և ____ ին առաջադրել է որպես համա-արբիտր:]/ [համաձայն է Հայցվոր(ների)՝ արբիտրաժային գործը միանձնյա/եռակազմ արբիտր(ների քննությանը) հանձնելու առաջարկին:]

18. [Քարտուղարությունը [տարի, ամիս, օր]-ին Հայցվորին և մյուս Կողմ(եր)ին) տեղեկացրել է լրացուցիչ կողմ ներգրավելու մասին]:

19. [Պատասխանող(ներ)ը/Լրացուցիչ կողմ(եր)ը Կանոնների 7-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան ներկայացրել է առարկություն՝ կապված արբիտրաժային համաձայնության առկայության, վավերականության կամ շրջանակի վերաբերյալ, կամ այն մասին, թե արդյոք ներկայացված բոլոր պահանջները կարող են լուծվել մեկ վարույթի շրջանակներում:]/[Այլ կերպ ասած, նրանք պատասխան չեն ներկայացրել:] [Այնուամենայնիվ, նրանք խնդրել են, որ Տրիբունալը ինքը քննի իր իրավասության հարցը:]

[Նման պայմաններում, Կանոնների 7-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ արբիտրաժային վարույթը շարունակվում է, և արբիտրաժային տրիբունալն է որոշում իր իրավասության, ներառյալ՝ արբիտրաժային համաձայնության առկայության կամ վավերականության հարցը, բացառությամբ այն դեպքերի, երբ Գլխավոր քարտուղարը, Կանոնների 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, հարցը ուղարկվում է Արբիտրաժային խորհրդին որոշում կայացնելու համար:]

[Տրիբունալի իրավասության հարցը Գլխավոր քարտուղարի կողմից չի ուղարկվել Արբիտրաժային խորհրդին, ուստի Տրիբունալը, կողմերին

դիրքորոշում ներկայացնելու հնարավորություն ընձեռելուց հետո, կկայացնի իրավասության վերաբերյալ որոշում:]

[Գլխավոր քարտուղարը [տարի, ամիս, օր]-ին տրիբունալի իրավասության հարցը ուղարկել է Արբիտրաժային խորհրդին՝ որոշում կայացնելու համար:]

[Արբիտրաժային խորհուրդը, ղեկավարվելով Կանոնների 7-րդ հոդվածի 3-րդ կետով, [տարի, ամիս, օր]-ին հրավիրված նիստի ընթացքում որոշում է կայացրել իրավասության վերաբերյալ [շարադրել որոշման եզրափակիչ մասը]:

20. Քարտուղարությունը, Կանոնների 18-րդ հոդվածին համապատասխան, արբիտրաժային գործի նյութերը [տարի, ամիս, օր]-ին փոխանցել է Տրիբունալին:
21. [Ի կատարումն Կանոնների 27-րդ հոդվածի պահանջների՝ Տրիբունալը [տարի, ամիս, օր]-ին անցկացրել է գործի կառավարման խորհրդակցություն, որը տեղի է ունեցել [անձամբ հանդիպման, նշել վայրը/ տեսա-կոնֆերանսի/հեռախոսի միջոցով] և որի ընթացքում Տրիբունալը Կողմերի հետ խորհրդակցել է այն ընթացակարգային միջոցների շուրջ, որոնք կարող են ձեռնարկվել:

VI – ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

22. Կողմերի միջև . . . . . թվականին կնքված արբիտրաժային համաձայնությունը նախատեսում է.

[*Մեջբերել վեճերի լուծման մասին վերապահումը:*]

VII – ԿԻՐԱՌԵԼԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

23. [*Ամբողջությամբ մեջբերել կիրառելի իրավունքի ընտրության մասին դրույթ(ներ)ը և/կամ Կողմերի միջև կամ Տրիբունալի հետ ցանկացած հետագա համաձայնություն, օրինակ, որ Տրիբունալը կարող է ex aequo et bono/amiable compositeur որոշում կայացնել, հակառակ դեպքում նշել Տրիբունալի կողմից որոշված կիրառելի իրավունքը*]:

VIII – ԿԻՐԱՌԵԼԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՆՈՐՄԵՐԸ

24. Կանոնների 21-րդ հոդվածի համաձայն՝ Արբիտրաժային տրիբունալը վարույթն անցկացնում է Կանոններով սահմանված կարգով, իսկ դրանով չկարգավորված հարցերը կարգավորվում են կողմերի համաձայնությամբ ընտրված ցանկացած կանոններով: Նման համաձայնության բացակայության դեպքում, արբիտրաժային տրիբունալը կարող է որոշել վարույթի կանոնները անկախ նրանից՝ արբիտրաժի նկատմամբ կիրառելի ազգային օրենսդրության ընթացակարգային կանոններին հղում կատարվում է, թե՝ ոչ:

IX – ԱՐԲԻՏՐԱԺԻ ԼԵԶՈՒՆ

25. [*Վկայակոչել կողմերի միջև կնքված արբիտրաժային համաձայնության կամ այլ համաձայնության համապատասխան դրույթը, որով սահմանվել է արբիտրաժի լեզուն: Արբիտրաժի լեզվի վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում Տրիբունալը պետք է որոշի արբիտրաժի լեզուն մինչև Ընթացակարգի արձանագրությունը հաստատելը, իսկ այդ որոշումը պետք է ներառվի արձանագրությունում:*]

/[Ըստ այդմ], արբիտրաժի լեզուն _____ է:

X – ԱՐԲԻՏՐԱԺԻ ՎԱՅՐԸ

26. [Ըստ արբիտրաժային համաձայնության՝ արբիտրաժի վայրը [քաղաք, երկիր]-ն է:]/ [Արբիտրաժի վայրը նշված չէ արբիտրաժային համաձայնության մեջ, հետևաբար, ըստ Կանոնների 20-րդ հոդվածի 1-ին մասի՝ արբիտրաժի վայրը Երևանն (Հայաստան) է:]/[Տրիբունալի որոշմամբ արբիտրաժի վայր է սահմանվել _____ (քաղաք, երկիր)ը:]/ [Կողմերի փոխադարձ համաձայնությամբ արբիտրաժի վայր ընտրվեց [քաղաք, երկիր]-ը:]

27. Համաձայն Կանոնների 20-րդ հոդվածի 2-րդ մասի՝ արբիտրաժային տրիբունալը, կողմերի հետ խորհրդակցելուց հետո, կարող է լսումներ և հանդիպումներ անցկացնել ցանկացած վայրում, որը նպատակահարմար է համարում: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ արբիտրաժային տրիբունալը

կարող է խորհրդակցություն անցկացնել ցանկացած վայրում, որը հարմար է գտնում:

XI – ԿՈՂՄԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՀԱԿԻՐՃ ԱՄՓՈՓԱԳԻՐԸ

28. Նշված ամփոփումները նախադատելի նշանակություն չունեն արդեն ներկայացված կամ հետագայում լսումների ժամանակ ներկայացվելիք հայտարարությունների, փաստարկների և առարկությունների համար:
29. Ընթացակարգի արձանագրության ստորագրումից հետո կողմերին չի թույլատրվում ներկայացնել որևէ նոր հայց(եր), բացառությամբ այն դեպքերի, երբ արբիտրաժային տրիբունալը, կողմերից մեկի դիմումի հիման վրա, որոշում է ընդունել նոր հայց(եր)ը՝ պատշաճ կերպով հաշվի առնելով նոր հայց(եր)ի բնույթը, վարույթի փուլը և այլ հանգամանքներ:
30. Ամփոփագիրը չի համարվում ո՛չ Տրիբունալի, ո՛չ Կողմի կողմից որևէ փաստի հաստատում կամ ընդունում:
31. Սույն արձանագրությամբ ամրագրված Կողմերի դիրքորոշումների և պահանջների ամփոփագրերը կազմվել են՝ հիմք ընդունելով Կողմերի ներկայացրած նյութերը:
32. [Ստորև ներկայացվում են Կողմերի դիրքորոշումների ամփոփումները:]
33. Ստորագրելով Ընթացակարգի արձանագրությունը՝ Կողմերը չեն ընդունում և չեն հաստատում հակառակ Կողմի վկայակոչած փաստերի ներքոնշյալ ամփոփումը:

(Ա) ՀԱՅՑՎՈՐ(ՆԵՐ)Ի ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՊԱՀԱՆՋԻ ՀԱԿԻՐՃ ԱՄՓՈՓՈՒՄ

[*լրացնել*]

(Բ) ՊԱՏԱՍԽԱՆՈՂ(ՆԵՐ)Ի ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՊԱՀԱՆՋԻ ՀԱԿԻՐՃ ԱՄՓՈՓՈՒՄ

34. [Պատասխանող(ներ)ը [և լրացուցիչ կողմ(եր)ը] ներկայացրել են տրիբունալի իրավասության վերաբերյալ առարկություններ՝ հետևյալ հիմնավորմամբ, [շարադրել հիմնավորումները]:]

35. [Ստորագրելով Ընթացակարգի արձանագրությունը Պատասխանող(ներ)ը [և լրացուցիչ կողմ(եր)ը] չեն հրաժարվում իրավասության վերաբերյալ իրենց ներկայացրած առարկություններից:]

[*ավարտել*]

(Գ) ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՈՂՄ(ԵՐ)Ի ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՊԱՀԱՆՋԻ ՀԱԿԻՐՃ ԱՄՓՈՓՈՒՄ

[*ավարտել.*]

XII – ՀԱՅՑԱԳԻՆԸ

36. [ARB/0003/11/24 արբիտրաժային գործով հայցագինը կազմում է ,,,,, ՀՀ դրամ, /[այլ փոխարժեք]] /[[տարի, ամիս, օր]-ի դրությամբ Հայցվոր(ներ)ի ներկայացրած պահանջ(ներ)ի հայցագինը կազմում է_____ ՀՀ դրամ,/ Պատասխանող(ներ)ի ներկայացրած հակընդդեմ պահանջի հայցագինը կազմում է _____ ՀՀ դրամ,] /[Վեճի հայցագինը դեռ որոշված չէ, Կողմերի պահանջների գումարային արժեքը և պատճառված վնասների չափը կորոշվի արբիտրաժային վարույթի ընթացքում:]

XIII – ՊԱՐՁՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀԱՐՑԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

37. Տրիբունալի կողմից պարզման ենթակա հարցերը կարող են ներառել, բայց չեն սահմանափակվում հետևյալով.

[*Լրացնել, ներառել նաև իրավասության և ծախսերի հետ կապված հարցերը, որոնք պետք է լուծվեն Տրիբունալի կողմից: Անհրաժեշտ է համոզվել, որ իրավասությանը վերաբերող ցանկացած հարց հստակ ձևակերպված է:]* [*Կողմերի դիրքորոշումներից բխող անվիճելի փաստերը ևս կարող են շարադրվել:]*

38. Պարզման ենթակա հարցերի շրջանակը որոշվում է հիմք ընդունելով Կողմերի ներկայացրած փաստարկները՝ ներառյալ նրանք, որոնք պետք է ներկայացվեն հետագայում, ինչպես նաև Կողմերի պահանջներին և առարկություններին առնչվող հարցերը:

39. Տրիբունալն ազատ է իր հայեցողությամբ մասնակի կամ միջանկյալ վճիռների կամ վերջնական վճռի ձևով որոշելու ցանկացած հարց՝ նախքան որոշում կայացնելը Կողմերին տալով իրենց գործը ներկայացնելու ողջամիտ հնարավորություն:

Այլ դրույթներ, որոնք կարող են ներառվել, երբ ակնկալվում է բոլոր Կողմերի ստորագրությունը

XIV – ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

40. Կողմերը և նրանց ներկայացուցիչները գիտակցում և երաշխավորում են, որ բոլոր նրանք, ովքեր գործում են իրենց անունից, ևս գիտակցում են, որ AMCA-ն գործում է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» և այլ օրենքներով և համարվում է արբիտրաժային վարույթի ընթացքում իրեն հայտնի դարձած որոշակի անձնական տվյալների տիրապետող:

41. Կողմը, ով կարծում է, որ ինքը կամ իր անունից գործող անձը սահմանափակված են անձնական տվյալների պաշտպանության մասին համապատասխան օրենքով, պետք է հնարավորինս սեղմ ժամկետներում այդ

մասին հայտնեն Տրիբունալին: Կողմը պետք է ապահովի, որ իր անունից գործող ցանկացած ոք Տրիբունալի կողմից ծանուցվել է դրա մասին: Սա նշանակում է, որ անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ ցանկացած հարց պետք է բարձրացվի գործի կառավարման խորհրդակցության ժամանակ, եթե նախկինում չի բարձրացվել: Անձնական տվյալների պաշտպանության մասին օրենսդրական կարգավորումները կարող են կիրառվել նաև կողմերի, նրանց ներկայացուցիչների, արբիտրների և մյուս անձանց նկատմամբ, որոնք գործում են նրանց անունից կամ նրանց պահանջով: Կողմը, որը համարում է, որ իր կամ իր անունից գործող անձանց նկատմամբ կիրառելի են անձնական տվյալների պաշտպանության մասին օրենսդրական համապատասխան կարգավորումները, պետք է հնարավորինս սեղմ ժամկետներում տեղեկացնի արբիտրաժային տրիբունալին: Կողմը պետք է ապահովի, որ իր անունից գործող բոլոր անձինք տեղեկացված լինեն արբիտրաժային տրիբունալի տրամադրած համապատասխան տեղեկությունների մասին: Սա նշանակում է, որ բացառիկ հանգամանքների բացակայության դեպքում, տվյալների պաշտպանության հետ կապված հարցերը պետք է բարձրացվեն գործի կառավարման խորհրդակցության ընթացքում, եթե ոչ ավելի վաղ:

42. Յուրաքանչյուր կողմ, կողմի ներկայացուցիչ և արբիտր, և որոնց նկատմամբ կիրառվում են անձնական տվյալների պաշտպանության մասին օրենսդրական կարգավորումները, անձնական պատասխանատվություն են կրում այդ պահանջների պահպանման համար:

43. Այնքանով, որքանով դա կիրառելի է, արբիտրաժային տրիբունալը, կողմերը և նրանց ներկայացուցիչները պետք է ընդունեն և ապահովեն, որ իրենց անունից գործող անձինք ձեռնարկեն համապատասխան տեխնիկական և կազմակերպչական միջոցառումներ՝ պահպանելու անձնական տվյալների պաշտպանության մասին կիրառելի օրենքի պահանջները և համապատասխան ժամկետները՝ անձնական տվյալների վրա ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար:

44. Արբիտրաժային տրիբունալն իրավասություն ունի վարույթի նկատմամբ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի կիրառման մասին կարգադրություն արձակել, որը կողմերի համար ունի պարտադիր ուժ:

XV – ԱՅԼ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

Ընթացակարգային որոշումներ

45. Տրիբունալը կողմերի հետ խորհրդակցելուց հետո ընթացակարգային ցանկացած հարցով կարող է որոշում կայացնել:
46. Յուրաքանչյուր ընթացակարգային որոշում Տրիբունալի անունից կարող է կայացվել Նախագահողի կողմից միանձնյա՝ համա-արբիտրների հետ խորհրդակցելուց հետո: Բացառիկ դեպքերում՝ անհրաժեշտությունից ելնելով Նախագահողը կարող է ընթացակարգային որոշում կայացնել միանձնյա:

Արդյունավետություն

47. Տրիբունալը և կողմերը համաձայնում են ներդնել իրենց բոլոր ջանքերը արբիտրաժային վարույթն արագ և ծախսարդյունավետ անցկացնելու համար՝ հաշվի առնելով վեճի բնույթն ու բարդությունը:

Այլ դրույթներ

Տրիբունալը և Կողմերը կարող են հավելյալ դրույթներ ավելացնել, այդ թվում՝ գաղտնիության վերաբերյալ ցանկացած համաձայնության մասին, արբիտրների վարձատրության, soft law իրավունքին ցանկացած հղում, ինչպիսիք են օրինակ՝ Իրավաբանների միջազգային ասոցիացիայի միջազգային արբիտրաժում շահերի բախման, Միջազգային արբիտրաժում կողմերի ներկայացուցչության ուղեցույցները և Ապացույցների ձեռքբերման կանոնները, *ինչպես նաև վեճը AMCA հաշտարարության կանոններին համապատասխան լուծելու հնարավորությանը:*

Գաղտնիություն

48. Կողմերը, արբիտրաժային տրիբունալը, AMCA-ն և արբիտրաժային վարույթում ներգրավված ցանկացած անձ պետք է արբիտրաժային վարույթին և վճռին վերաբերող բոլոր հարցերը և փաստաթղթերը միշտ դիտարկեն որպես գաղտնի, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ: Արբիտրաժային վճիռը կարող է հրապարակվել բոլոր կողմերի համաձայնությամբ կամ այն դեպքում և այնքանով, որքանով տեղեկության հրապարակումը պահանջվել է կողմի կողմից՝ իրավական պարտավորության ուժով, իրավունքի պաշտպանության կամ իրացման նպատակով կամ

դատարանում կամ այլ իրավասու պետական մարմինների հետ իրավական վարույթների համար:

Հարկեր

49. Համաձայն Արբիտրաժային կանոնների Հավելված 1-ի 4-րդ հոդվածի 5-րդ մասի՝ արբիտրին վճարվող գումարները չեն ներառում օրենքով նախատեսված հնարավոր հարկերը կամ տուրքերը: Արբիտրի վարձատրությունը կատարվում է վերջինիս և AMCA-ի միջև կնքված ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա:

Հաշտարարություն

50. Կողմերը կարող են ցանկացած ժամանակ վեճի լուծումը իրականացնել AMCA հաշտարարության կանոններին համապատասխան, ինչը չի անդրադառնում արբիտրաժի ընթացքի վրա:

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԳՐՈՒՄ

Արբիտրաժի վայրը: (քաղաք, երկիր)

Ստորագրություններ:

Անուն Ազգանուն *Հայցվոր /Հայցվորի անունից կամ հանձնարարությամբ գործող անձ*	**Անուն Ազգանուն** *Պատասխանող/Պատասխանողի անունից կամ հանձնարարությամբ գործող անձ*	**Անուն Ազգանուն** *Լրացուցիչ կողմ/Լրացուցիչ կողմի անունից կամ հանձնարարությամբ գործող անձ*
Ամսաթիվ:	Ամսաթիվ:	Ամսաթիվ:
Անուն Ազգանուն *Համա-արբիտր*	Անուն Ազգանուն *Նախագահող / Միանձնյա արբիտր*	Անուն Ազգանուն *Համա-արբիտր*

Ամսաթիվ:

Ամսաթիվ: Ամսաթիվ: